2011-2013 թվականների ՀՀ ոստիկանության բաժիններում քաղաքացիների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ տեղեկանք

Ոստիկանությունում վատ վերաբերմունքի դեպքեր

Գործ 1, 2011թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած քաղաքացի Անուշ Սարգսյանը հայտնել է, որ իրեն հեռախոսազանգով քննչական բաժին հարցաքննության է կանչել քննիչը, որի վարույթում է գտնվել ամուսնու դեմ հարուցված քրեական գործը: Քննիչ Ա. Սարգսյանին ներկայացրել է վկայի հարցաքննության արձանագրության նմուշը եւ մատնանշել այն տողերը, որտեղ պետք է ստորագրի Անուշ Սարգսյանը: Ստորագրելուց հետո քննիչը սկսել է հարցեր տալ եւ օգտվելով նրա կաշկանդվածությունից՝ հարցերի մի մասի պատասխանները ինքն է թելադրել:

Ըստ Ա. Սարգսյանի քննիչի կողմից ինքը ենթարկել է հոգեբանական ճնշումների:

Քննիչի կողմից Անուշ Սարգսյանի իրավունքների մասին որևէ պարզաբանում չի արվել չի բացատրվել մերձավոր ազգականի դեմ ցուցմունքներ տալու պարտականությունից ազատ լինելու մասին:

Ձեռնարկված միջոցառումներ

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն:

Ստացված պատասխանով դատախազությունից հայտնել են, որ քննիչի կողմից անձի իրավունքների խախտում թույլ չի տրվել:

Քաղաքացին չի ցանկացել շարունակել գործը, մտածելով որ, եթե ինքը բողոքարկի իր նկատմամբ ոստիկանության աշխատակիցների գործողությունները (վատ վերաբերմունքը) կարող է վատ հետևանքներ ունենալ ամուսնու համար: Իհարկե չի բացառվում նաև ոստիկանության աշխատակիցների միջամտությունը:

Գործ 2., 2011թ.

Խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ համայնքի բնակիչ Արտյոմ Մարկոսյանը հայտնել է, որ քննիչի կողմից, առանց ծանուցագրի կանչվել է Լոռու մարզի քննչական բաժին հարցաքննության, հարցաքննության ներկայացած քաղաքացու նկատմամբ քննիչը վերաբերվել է անհարգալից, կոպիտ և խոսել է հայհոյանքներով ինչպես նաև ենթարկվել է հոգեբանական ճնշումների:

Ըստ քաղաքացու, քննիչի նպատակն է եղել նրանից ցուցմունք վերցնել նույն գյուղի մեկ այլ բնակչի կողմից իր աշխատակիցներին վատ վերաբերվելու մասին:

Ձեռնարկված միջոցառումները

Ա. Մ.-ի իրավունքների պաշտպանության նպատակով կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի դատախազություն:
Կազմակերպության հանցագործության մասին հաղորդումն ուղարկվել է Ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի որով հանձնարարվել է կատարել ծառայողական քննություն:

06.10.2011թ. գրությամբ Գուգարքի քննչական բաժանմունքի քննիչ Ա. Մաթևոսյանը հայտնել է, որ կազմակերպության դիմումում նշված հանգամանքները ստուգելու համար Գուգարքի քննչական բաժանմունքում նախապատրաստվել են նյութեր և ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների կողմից կատարվել է ծառայողական քննություն: Ռաֆիկ Հայկի Հայկյանի գործողություններում օրինականության և կարգապահական խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Գործ 3., 2011
Խախտման նկարագրությունը

Կազմակերծություն դիմած Ջուլիետտա Հովհաննիսյանի խնդիրը կայանում է նրանում, որ նա առանց ծանուցագրի՝ հեռախոսազանգի միջոցով կանչվել է ոստիկանություն և ոստիկանության աշխատակից Ս. Այվազյանի կողմից ոստիկանությունում անհարգալից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, սպառնալիքների է ենթարկվել և հոգեբանական ճնշումների է ենթարկվել:
Ձեռնարկված միջոցառումներ

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ Գլխավոր դատախազություն և ՀՀ ոստիկանություն:

Կազմակերպության հաղորդմանն ի պատասխան ստացվել է գրություն, որով հայտնել են, որ ՀՀ ոստիկանության ներքին անվհանգության վարչութոյունում իրականացվել է ծառայողական քննություն, որի արդյունքում նկատողություն է հայտարարվել քաղաքացու իրավունքները խախտող ոստիկանության աշխատակցի նկատմամբ:

Գործ 4., 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած Գայանե Փահլևանյի խնդիրը կայանում է նրանում, որ ինքը հանդիսացել է 53620 զորամասի ֆինանսական մասի պետական-գանձապահ: Զորամասում իրականացվել են ստուգումներ, որոնց ժամանակ թերություններ, ջնջումներ են հայտնաբերվել, որի արդյունքում մեղադրանք է առաջադրվել իրեն: Նախաքննության ընթացքում քննիչ կողմից թույլ են տրվել

քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավունքների խախտում մասնավորապես. հարցաքննությունը առանց ընդհատվելու տևել է մոտ 9 ժամ, ինչպես նաև խախտվել է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը,հարցաքննության և առերես հարցաքննության ժամանակ հնչել են սպառնալիքներ և ածանապատվությունը նվաստացնող հայտարարություններ են արվել: Քննիչի կողմից հոգեբանական ճնշումներ են գործադրվել Գ. Փահլևանիյանի նկատմամբ ցուցմունքներ ստանալու նպատակով:

Չեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազութուն:

Կազմակերպության կողմից դիմում է ուղարկվել ստանալու հաղորդման հիման վրա կայացված քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում:

Դատախազության կողմից քրեական գործ հարուցելու, կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում ստանալու փոխարեն ստացվել է գրություն, որում նկարագրված են Գ. Փ.-ի գործում եղած հանգամանքները: Այսինքն՝ դատախազությունը հաղորդման մեջ նշված փաստերին չի տվել իրավաբանական որակում, այլ փորձել է շրջանցել հաղորդմամբ նշված խախտումների պատասխանատուներին պատասխանատվության ենթարկել:

Կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը կայացրել է որոշում, որով մերժել է կազմակերպության կողմից ներկայացված դիմումը, պատճառաբանությամբ, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է հիմնավոր և օրինական որոշում, այն վերացնելու հիմքեր չկան:

Ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանը կայացրել է վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում: Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք:

Գործ 5, 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2012թ. նոյեմբերի 19-ին իր իրավունքների պաշտպանության խնդրով կազմակերպություն է դիմել Ռոման Կուդաշնը: Ռ.Կուդաշինի իրավունքների պաշտպանության խնդրով նոյեմբերի 21-ին կազմակերպություն է դիմել նաև վերջինիս կնոջ քույրը՝ Է.իանա Քոչարյանը:

Կազմակերպությանն ուղղված դիմումում հայտնվում է այն մասին, որ նշված գործի նախաքննության ընթացքում Ռ. Կուդաշինի նկատմամբ կիրառված բռնությունների, ճնշումների մասին: Վերջինս հայտնել է, որ 2012 թ. մարտի 7-ին 8:30-ի սահմաններում իրեն տարել են ոստիկանություն՝ որպես կասկածյալ: Սակայն Ռ. Կ.ը հայտնել է, որ ինքը գողություն չի կատարել և պահանջել է տրամադրել

պաշտպան: Ա. Նահապետյանը հայհոյել է, հարվածել և ստիպել գրել, թե «ոնց ա եղել»: Հետո բերել են Արթուր Կիրակոսյանին Ռ. Կուդաշինը կողքի սենյակից լսել է, թե ինչպես են գոռում Արթուրի վրա և ասում «դե ասա»: Արթուրը կաղալով եկել է, նստել և սկսել գրել: Ռ. Կուդաշինը իր դիմումում նշել է, որ «հենց ինչ-որ մի բան այնպես չէր գրում, հարվածում էին նրան»:

Հետո սկսել են ցուցմունքներ թելադրել Ռ. Կուդաշինին՝ վիրավորելով, հարվածելով վերջինիս: Ընդ որում, այդ ընթացքում Ռ. Կուդաշինը շարունակել է պաշտպան պահանջել, սակայն նրան թույլ չեն տվել զանգահարել, ինչպես նաև զուգարան գնալ: Ոստիկանության աշխատակիցների թելադրանքով ցուցմունքները գրելուց հետո Ռ. Կուդաշինին բաց են թողել միայն երեկոյան ժամը 22-ի սահմաններում:

Ռ. Կուդաշինի և Ա. Կիրակոսյանի առերես հարցաքննության ժամանակ Կիարկոսյանը Կուդաշինին ասել է, որ իրեն ոստիկանները «գիտես ինչ ձև են ծեծում, քանի անգամ եմ ուզել գրածս փոխեմ, ծեծել են»: Երբ Ռ. Կուդաշինը հարցրել է, թե ինչ է եղել ոտքին, Ա. Կիրակոսյանը հայտնել է, որ «ծեծել են էն օրը, որ չէի գրում, դրա համար էլ քո անունն եմ տվել…»:

Լիանա Քոչարյանը հայտնել է, որ երբ ոստիկաններն իր քրոջ ամուսնուն՝ Ռ. Կուդաշինին, տարել են ոստիկանություն, ինքը գնացել է նրանց հետևից և ժամը 3-ի 4-ի սահմաններում թույլ են տվել ուտելիք բարձրացնել փեսայի համար: Լ. Քոչարյանը ոստիկանության շենքում հանդիպել է Ա. Կրակոսյանին՝ ծեծված ու կարմրած:

Գործի դատական քննության ժամանակ Ա. Կիրակոսյանը դատարանին հայտնել է ոստիկանության աշխատակիցների կողմից իր նկատմամբ բռնություն, ճնշումներ գործադրելու փաստի մասին: Սակայն դատարանը որևէ գործողություն չի կատարել, և արժանահավատ չի գնահատել դատարանում տրված ցուցմունքները:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հարցորդում է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին՝ խնդրելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հաղորդմամբ ներկայացված խախտումները բացահայտելու և դրանք թույլ տրված անձանց պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև Ռ. Կուդաշինի խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Հովակիմյանը կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Որոշումը կազմակերպությունը ստացել է 2013 թ. հունվարի 22-ին:

Քրեական գործի հարոցումը մերժելու մասին որոշման դեմ ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին:

ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Հ. Հարությունյանի կողմից ստացվել է գրություն, ըստ որի ներկայացված դիմում բողոքը մերժվել է:

Կազմակերպության կողմից Գ. Հովակիմյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 25.12.2012թ. որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

Գործը գտնվում է ընդհանուր իրավասության դատարանում:

Գործ 6, 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Իր իրավունքների պաշտպանության խնդրով 2012թ. նոյեմբերի 3-ին մեր կազմակերպություն են դիմել Սեդա Զալինյանը, Շարբաթ Զալինյանը և Սիրուշ Ծատինյանը:

Ըստ Սեդա Զալինյանի 2012թ. նոյեմբերի 2-ին առավոտյան ժամը 11:00-11:15-ի սահմաններում թաղային Նահապետյանը այցելել է իրենց տուն և ասել, որ իրեն տանում են Գուգարքի ոստիկանություն՝ ինչ-որ ճագարներ գողանալու համար: Ըստ Ս. Զալինյանի ոստիկանության Գուգարքի բաժնի աշխատակից փոխգնդապետ Մանուչարյանը ծեծի է ենթարկել իրեն, ինչպես նաև անպատվել, վիրավորել: Երբ Ս. Զալինյանը նշել է, որ Մանուչարյանը պետք է պատասխան տա այդ խոսքերի համար, վերջինս կրկին հարվածել է Ս. Զալինյանի գլխին, փետրել նրա մազերը: Ս. Զալինյանը առավոտյան ժամը 11:00-ի սահմաններից մինչև 19:00-ի սահմանները մնացել է ոստիկանության Գուգարքի բաժնում: Ոստիկանության աշխատակիցները պնդել են, որ Ս. Զալինյանը 10-15 օր առաջ ճագարներ է գողացել: Ս. Զալինյանը ոստիկանության աշխատակիցներին հայտնել է, որ այդ ճագարները փոխանակել է Վանաձորի շուկայում՝ ընկույզի դիմաց: Սակայն ոստիկանության աշխատակիցները չեն հավատացել և շարունակել են ծեծել:

Ծեծի ազդեցության տակ, չդիմանալով ցավին, Ս. Զալինյանը ասել է՝ «ինչ ուզում եք կստորագրեմ»: Իր՝ կազմակերպությանն ուղղված դիմումում վերջինս նշել է, որ փոխգնդապետ Մանուչարյանի մոտ իր կողմից գրված բացատրությունը սուտ է, չի համապատասխանում իրականությանը:

Կազմակերպություն դիմելու նույն օրը Զալինյանը հրաժարվել է կազմակերպությանն ուղղված իր դիմումից և խնդրել իր իրավունքների պաշտպանության համար ոչինչ չձեռնարկել:

Գործ 7, 2013թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2013թ. Փետրվարի 13-ին Շենգավիթի ոստիկանության բաժանմունք բերման են ենթարկել Նարեկ Սողոմոնյանին և Սամվելի և նրանց 3 ընկերներին: Ոստիկանության բաժնում Ն. Սողոմոնյանի և Սամվել..... նկատմամբ կիրառվել է բռնություն՝ գլուխները խփել են պատին՝ ցուցմունքներ ստանալու նպատակով: կազմակերպություն դիմած տղաների պատմելով նրան նկատմամտ կիրառել են նաև էլեկտրաշոկ: Բռնության հետքեր չեն եղել, ոստիկանության աշխատակիցները աշխատել են պրոֆեսիոնալ:

Բժշկական օգնության չեն դիմել, որովհետև վախենում են և չեն ցանկանում:

Կազմակերպության կողմից իրավունքերի պաշտպանություն չի իրականացվել քանի որ տղաները չեն ցանկացել շարունակել:

Կազմակերպություն դիմած երիտասարդները հրաժարվել իրավունքների պաշտպանության մասին դիմում կազմակերպությանը տալուց և խնդրել են, որպեսի ոչ մի գործողություն չձեռնարկվի իրենց իրավուքների պաշտպանության ուղղությամբ, քանի որ վախենում են, որ իրենց նկատմամբ կարող են այլ անօրինական գործողություններ կիրառվել:

Համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածն ամրագրում է, որ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»:
ՀՀ քրեական ատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածն ամրագրում է անձի անձնական անձեռնմխելիության իրավունքը, այսպես՝ «Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով»:
Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ 14-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

Քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝«Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը պարտադիր է քրեական դատավարությանը մասնակցող բոլոր մարմինների և անձանց համար»: Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝«Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում»:

Ոստիկանության աշխատակիցները շատ հաճախ հոգեբանական և ֆիզիկական ճնշումներ են գործադրում բերման ենթարկված անձանցից, մեղադրյալներից, կասկածյալներից ինչպես նաև դատավարական կարգավիճակ չունեցող անձանցից ցուցմունքներ ստանալու նպատակով, որն էլ հանգեցնում է խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտմանը: Իրականում վերը նշված իրավունքը խախտվում է ավելի հաճախ, սակայն քաղաքացիները բարձրաձայնել

դրա մասին չեն ցանկանում, վախենալով, որ հնարավոր է ճնշումները և հետապնդումը շարունակվեն: Բոլոր գործերով կազմակերպությունը սպառում է ներպետական ատյանները և դիմում է ներկայացնում ՄԻԵԴ, քանի որ ներպետական ատյաններում իրավունքի խախտման փաստը ճանաչելուն ուղղված գործողությունները ապարդյուն են:

Ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունների վերաբերյալ

Գործ 1. 2011թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

2011 թ. փետրվարի 15-ին՝ առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում, Գյումրի քաղաքում վրացական պետհամարանիշներով շահագործվող ավտոմեքենաների վարորդները փորձել են մեկնել Վանաձոր՝ մասնակցելու Վանաձոր քաղաքում ժամը 12:00-ին կազմակերպվող բողոքի ակցիային՝ ուղղված ՀՀ մաքսային օրենսդրության վերջին փոփոխություններին: Ջաջուռ գյուղի մոտ պետավտոտեսչության աշխատակիցները Գյումրի քաղաքից Վանաձոր մեկնող վրացական պետհամարանիշներով ավտոմեքենաների վարորդներին կանգնեցրել են և թույլ չեն տվել մասնակցել կազմակերպված հանրահավաքին: Ոստիկանության աշխատակիցները պատճառաբանել են, որ ճանապարհները անանցանելի են, պատճառը ոչ թե հանրահավաքն է, այլ ճանապարհների անանցանելիությունը, սակայն ցուցարարների երկար պայքարից հետո, որ իրենք անպայման պետք է շարունակեն իրենց երթն, ոստիկանության աշխատակիցները բացել են ճանապարհը: Նույն օրը 15-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում հասել են Վանաձոր, Վանաձոր-Երևան ճանապարհի Վանաձոր քաղաքի մուտքի մոտ՝ մինչև Վանաձոր-Ստեփանավան խաչմերուկի մոտ 1 կմ հատվածում, ճանապարհը ոստիկանության աշխատակիցների կողմից փակվել է եւ մոտ 1 ժամ ամբողջ երթևեկությունը եղել է դադարեցված:

Ձեռնարկված միջոցառումներ
Կազմակերպության կողմից հանցագործություն մասին հաղորդում է ուղարկվել ՀՀ Գլխավոր և Լոռու մարզի դատախազություններ:
ՀՀ Լոռու մարզի քննչական բաժանմոմ նյութեր են նախապատրաստվել, իրականացվել են քննչական գործողություններ, որից հետո կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, պատճառաբանությամբ, որ այդ օրն իրականացվել է ճանապարհների ձյունից մաքրման աշխատանքներ, որի ժամանակ ավտոգրեյդերը խափանվել է և խոչնդոտել է ավտոմեքենաների երթևեկությունը: Սակայն կազմակերպության հաղորդմանը կցված են եղել լուսանկարներ, որոնցում շատ պարզ երևացել է որ այդ հատվածում ձյան շերտեր չեն եղել: Հաջորդ օրվա ճանապարհը փակելը, վարորդներին կազնեցնելը քրեական քորձի հարուցումը մերժելու մասին որոշման մեջ պատճառաբանվել է այն, որ այդ օրը մարզում

իրականացվել է հետախուզվող անձանց Վանաձոր քաղաքում գտնվելու մասին ստացված օպերատիվ տեղեկությունների հիման վրա ծառայություն է կատարվել Վանաձոր քաղաքից դուրս եկող ավտեմքենաները կանգնեցվել են և կատարվել են ստուգումներ:
Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկվել է դատական կարգով: ՀՀ բոլոր դատարանները մերժել են կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքը քննիչի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու և քերական գործը նախաքննության ուղարկելու պահանջների մասին:
Կազմակերպությունը սպառելով ներպետական բոլոր ատյանները, կազմակերպության կողմից 2 գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների երվրոպական դատարան՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ և 13-րդ հոդվածների լույսի ներքո:

Գործ 2., 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

2012թ օգոստոսի 1-ին՝ ժամը 15:10-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի քննչական բաժնի քննիչ Կարեն Մոսինյանը զանգահարել է ՀՔԱՎ գրասենյակի Ալավերդի քաղաքի աշխատակից Անուշ Գալստյանին ու ասել, որ նրա հետ մոտիկից խոսելու բան կա, որ գնա բաժին, առանց ծանուցագրի:
Այնուհետև քննիչն ինքն է գնացել Ա. Գալստյանի տուն և ասել որ իր դեմ բողոք է ներկայացվեծ և իբր իքը չի ուզում քրեական գործ հարուցի, քանի որ իրենց ծնողները նույն տեղում են աշխատում: Ա. Գալստյանը երբ ցանկացել է ծանոթանալ իր դեմ ներկայացված բողոքին քննիչը ասել է. «…խնդրում եմ թափ տուր վրայիցդ Հելսինկյանի փոշին, մենք ուղղակի խոսում ենք, ես չեմ ուզում, որ քրեական գործ հարուցեմ, քանի որ մեր ծնողները նույն տեղն են աշխատում և վաղը մյուս օրը խոսակցության առիթ չլինի»: Քննիչի կողմից խախտվել է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հարցաքննության կարգը:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Գլխավոր դատախազություն:

Կազմակերպության կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման ի պատասխան ստացվել է գրություն, որով հայտնել են, որ ՀՀ ոստիկանության ՔԳ վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքում խիստ նախազգուշացվել է Կարեն Մոսինյանը և հետագայում նմանատիպ խախտում,ներ թույլ տալու դեպքում կենթարկվի կարգապահական տույժի:

Գործ 3, 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. ապրիլի 7-ին երեկոյան ժամը 22:00-ի սահմաններում Արման Բարսեղյանը ընկերների հետ իր ավտոմեքենայով գնացել Վանաձոր քաղաքի սուրբ Աստվածածին եկեղեցի մասնակցելու «Ճրագալույսի տոնին»: Վերջինս փորձել է իր վարած ավտոմեքենան կայանել եկեղեցու բակի դարպասների մոտ, սակայն տվյալ պահին տվյալ վայրում ծառայություն իրականացնող ոստիկանության Վանաձորի բաժնի Բազումի բաժանմունքի օպեր-լիազոր Վահե Բարսեղյանը ելնելով քաղաքացիների հոծ բազմությունից և հաշվի առնելով, որ մեքենաների մուտքը եկեղեցու բակ կխոչընդոտի քաղաքացիների անցուդարձը, խցանումներ կառաջացնի արգելել է Արման Բարսեղյանին ավտոմեքենան կայանել եկեղեցու բակում: Արման բարսեղյանն էլ պնդել է, որ մեքենան պետք է կայանի նշված վայրում, ր չի կատարել ոստիկանության աշխատակցի օրինական պահանջները և անհիմն վրդովվելով Վահե Բարսեղյան նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքներ է տվել՝ մասնավորապես սպառնացել է որ որ «կսատկացնի» և ավտոմեքենան վարել է նրա ուղղությամբ:
Վերը նշված արարքի համար Արման Բարսեղյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն է Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից իրականացվում է քաղաքացու իրավունքների պաշտպանություն՝ մասնավորապես գործով ներգրավվել է փաստաբան:
Առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա. Բարսեղյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով. Մեկ տարի ժամկետով: Դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան, որը ևս նույնն է թողել առաջի ատյանի դատարանի որոշումը: Վերաքննիչ դատարանի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք:

Գործ 4, 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2013 թվականի հունվարի 14-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ է դիմել Սերինե Գրիգորյանը:

Վերջինս հայտնել է այն մասին, որ ոստիկանության աշխատակիցները մի քանի անգամ եկել են իր բնակարան՝ խուզարկություն կատարելու նպատակով: Մասնավորապես, կազմակերպությանն ուղղված իր դիմումում Ս. Գրիգորյանը նշել է, որ առաջին անգամ ոստիկանության հինգ աշխատակից իրենց տուն են եկել 2012 թվականի նոյեմբերի 18-ին գիշերը ժամը 24:00-ին: Ոստիկանության աշխատակիցները հայտնել են, որ Բազումի ոստիկանությունից են և փնտրում են Սամվելին, որի համար բնակարանում պետք է կատարեն խուզարկություն: Սակայն, ըստ Ս. Գրիգորյանի դիմումի, բնակարանի խուզարկության վերաբերյալ ոստիկանության աշխատակիցները որևէ փաստաթուղթ չեն ներկայացրել: Բնակարանը ստուգելուց և ոչ ոքի չհայտնաբերելուց հետո ոստիկանության աշխատակիցները կազմել են «փաստաթուղթ այն մասին, որ փնտրվող անձին չեն հայտնաբերել»: Նշված դեպքից մոտ չորս օր անց ոստիկանության երկու

աշխատակից գնացել են Ս. Գրիգորյանի տուն, ներկայացել որպես Գուգարքի ոստիկանության աշխատակիցներ և ասել, որ պետք է բնակարանը նայեն: Սակայն ինչպես առաջին, այնպես էլ այս անգամ ոստիկանության աշխատակիները չեն ներկայացրել բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվության մասին դատարանի որոշումը:

Երրորդ անգամ ոստիկանության երկու աշխատակից Ս. Գրիգորյանի բնակարան են այցելել 2013 թվականի հունվարի 4-ին, ներկայացել են որպես ոստիկան, ներկայացրել նույն պահանջները և բնակարանը ստուգելուց հետո կազմել արձանագրություն և հեռացել: Ըստ Ս. Գրիգորյանի, մինչ հեռանալը ոստիկանության աշխատակիցներից մեկը նշել է, որ դրանից հետո պետք է հաճախակի այցելի նրանց:

Իր դիմումում Ս. Գրիգորյանը նշել է նաև, որ ինքն ունի առողջական խնդիրներ և ոստիկանության աշխատակիցների այցերի պատճառով իր առողջական վիճակը վատթարանում է:

2013 թ. հունվարի 17-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն: ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանը 2013թ. փետրվարի 6-ին հարցաքննության է հրավիրել կազմակերպություն դիմած քաղաքացու, որի հոտ հարցաքննության է ներկայացել նաև կազմակերպության իրավաբանը, սակայն վերջինիս թույլ չեն տվել մասնակցել հարցաքննությանը: Քննիչի հետ հեռախոսազրույցի միջոցով իմացել ենք, որ քրեական գործի հարուցումը մերժվել սակայն որոշում չենք ստացել /քննիչը նորից է ուղարկել/:

Գործ 5, 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2013 թվականի հունվարի 18-ին մեր կազմակերպություն է դիմել ՀՀ Վանաձոր քաղաքի Տարոն 2 ՔՇՀ 3-4, 40/10 հասցեի բնակիչ Սամվել Սերյոժայի Վերանյանը: Վերջինս կազմակերպությանն ուղղված դիմումում հայտնել է այն մասին, որ մեկ ամիս առաջ ոստիկանության Գուգարքի բաժնի երկու ոստիկան գնացել են իր տուն և հայտնել, որ քննիչ Մաթևոսյանը պահանջել է, որպեսզի ոստիկանություն տանեն իր ընտանիքի կողմից փաստացի օգտագործվող «Օպել Աստրա» մակնիշի 01OQ101 պետհամարանիշի ավտոմեքենան: Ոստիկանության աշխատակիցները, ըստ Ս. Վերանյանի, «մեքենան տանելու վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ չեն ներկայացրել»: Մեքենան ոստիկանության Գուգարքի բաժին տեղափոխել է Ս. Վերանյանը, որտեղ քննիչը վերցրել է ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը և բանալին, հայտնելով, որ մեքենան պետք է մնա ոստիկանությունում՝ ցուցում կա:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Գուգարքի քննչական բաժին, պարզելու ինչ հիմքով է ավտոմեքեն գտնվում որստիկանությունում և ինչ գործողություններ են կատարվում, ինչպես նաև երբ է

վերադարձվելու ավտոմեքենան օգտագործողներին:Ստացված պատասխանով տրամադրվել է քաղաքացուն բավարարող պատասխաններ:

Գործ 6., 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության երկրապահ կամավորականների միության Վանաձորի քաղաքային բաժանմունքի նախագահը 2011 թվականի ապրիլի 16-ին գրավոր դիմել է Վանաձորի քաղաքապետին՝ հայտնելով, որ 2012 թվականի ապրիլի 17-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակում տեղի ունենալիք ադրբեջանական ֆիլմերի փառատոնին հրատապ արձագանքելու նպատակով երկրապահ կամավորականների միության Վանաձորի քաղաքային բաժանմունքը 2011 թվականի ապրիլի 16-ին Վանաձոր քաղաքի Հայքի հրապարակում կազմակերպելու է «Շտապ» հավաք, այնուհետև երթ մինչև «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»:

Նույն օրը Վանաձորի քաղաքապետը թիվ 066 N 1770 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝ հայտնելով 2012 թվականի ապրիլի 16-ին կայանալիք շտապ հավաքի և երթի մասին և խնդրել է ապահովել հավաքի և երթի ընթացքում հասարակական կարգը:

2012 թվականի ապրիլի 16-ին Վանաձոր քաղաքի Հայքի հրապարակում տեղի է ունեցել հանրային հավաք, որից հետո հավաքի մասնակիցները երթով շարժվել են դեպի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի 59 հասցեում գտնվող՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի Գրասենյակ» հասարակական կազմակերպության աշխատանքային տարածք:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի Գրասենյակ» հասարակական կազմակերպության աշխատանքային տարածքի դիմաց տեղի ունեցած հանրային հավաքի ընթացքում երթի մասնակիցներից Մարգարիտա Խաչատրյանը, որպես դժգոհության նշան, իր ձեռքին եղած թվով երկու քարերով դիտավորությամբ հարվածել և կոտրել է գրասենյակի երկու պատուհանների ապակիները, այդ քարերից մեկը դիպել է գրասենյակում գնտվող աշխատակցուհի Մարիետա Թեմուրյանին: Երթի մասնակիցներից մեկը պոկել և վնասել է գրասենյակի պատին փակցված պաստառը և հեռակառավարման վահանակի հենակը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի Գրասենյակ» հասարակական կազմակերպության աշխատանքային տարածքի դիմաց տեղի ունեցած հանրային հավաքի ընթացքում գրասենյակի դիմաց կանգնած են եղել ոստիկանության աշխատակիցներ, որոնք հավաքի մասնակիցների կողմից հակաիրավական գործողությունները կանխելու համար անհրաժեշտ միջոցառումներ չեն ձեռնարկել՝ դրսևորելով ակնհայտ անգործություն:

2012 թ. մայիսի 4-ին կազմակերպության կողմից հայցադիմում է ներկայացվել վարչական դատարան՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Վարչական դատարանի կողմից սույն թվականի մայիսի 22-ին կայացվել է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ ոստիկանության մասին օրենքով հստակ սահմանվում է ոստիկանության աշխատակիցների իրավունքները և պարտականությունները, որոնք կոչված են ապահովելու յուրաքանչյուրիս իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը: Ոստիկանության աշխատակիցների կողմից ոստիկանության մասին օրենքի դրույթները չպահպանելը հանգեցնում քաղաքացիների իրավունքների և ազատությունների խախտման:

Անօրինական խուզարկություն դեպքեր

Գործ1., 2011թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած քաղաքացի Վալտեր Սահակյանը հայտնել է, որ Նոյեմբերյանի պետավտոտեսչության աշխատակիցները կանգնեցրել են իր կողմից վարվող ավտեմեքենան և առանց համապատասխան որոշման խուզարկել ավտոմեքենան: Խուզարկություն կատարելուց հետո խուզարկության արձանագրություն կամ որոշում անձին չի տրամադրվել:

Ձեռնարկված միջոցառումներ

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Հատուկ քննչական ծառայություն:

Կազմակերպության հանցագործության մասին հաղորդումն ուղարկվել է ոստիկանության ներքին անվտանգության ծառայություն, որտեղ կատարվել է ծառայողական քննություն, որն ավարտվել է եզրակացությամբ ըստ որի ոստիկանության աշխատակիցների գործողություններում հանցագործության հատկանիշներ չեն եղել:
Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչություն ստանալու ծառայողական քննության նյութերը:

Կազմակերպության հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ կատարված ծառայողական քննության արդյունքում ոստիկանության աշխատակիցների գործողություններում որևէ խախտում չի հայտնաբերվել:

Գործ 2, 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. փետրվարի 1-ին կազմակերպություն է դիմել Ստեփանավան քաղաքի բնակիչ Ա. Թ-ը կազմակերպությանն ուղղված դիմումով հայտնել է, որ 2012 թ. հունվարի 18-ին առավոտյան ժամը 10-ին Ստեփանավանի ոստիկանության աշխատակիցները դատարանի որոշմամբ խուզարկել են իրենց բնակարանը՝ փնտրելով գողացված ապրանքներ: Սակայն խուզարկության ընթացքում բնակարանից շատ բացահայտ տեղից գտել են թղթով փաթաթված մի զանգված, որը ըստ ոստիկանների հայտարարության պարզելու համար թե ինչ է պետք է ուղարկվի փորձաքննության: Նույն օրը ոստիկանության աշխատակիցների գնալուց 2 ժամ հետո Ա. Թ. կանչվել է ոստիկանություն, ցուցմունքներ տալու նպատակով, որտեղ է նրան ասել են եթե դա «թմրանյութը» կարող է Ազգային անվտանգությունում աշխատող որդունը լինել, որի պատճառով նա կարող է խնդիրներ ունենալ, և Ա. Թ. ստիպված ասել է, որ զանգվածը ինքն է հավաքել և չորացրել մոտ 7-8 ամիս առաջ, և այն տուն բերելով դրա գոյության մասին մոռացել է: Հարցաքննությունից հետո քննիչը վերցրել է անձնագիրը:

Նշանակվել է փորձաքննություն, որի արդյունքում նրա արյան մեջ թմրանյութի պարունակություն չի հայտնաբերվել:

Բնակարանում խուզարկություն կատարվել է ընթերակաների մասնակցությամբ, խուզարկությունից հետո սահմանված կարգի համաձայն նրանց տրամադրվել է խուզարկության արձանագրության օրինակը:

Քաղաքացին խնդիրը ներկայացնելուց և համապատասխան իրավական աջակցություն ստանալուց հետո քաղաքացին չի ցանկացել բողոքարկել ոստիկանության աշխատակիցների գործողությունները:

Գործ 3, 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ստացած հավաստի տեղեկությունների համաձայն՝ 2012 թ. սեպտեմբերի 25-ին և 26-ին համատարած խուզարկություններ են իրականացվել Վանաձոր քաղաքի բնակիչների բնակարաններում:

Բնակիչների մեծ մասը, խուսափելով հնարավոր հետապնդումներից, վախենում է բարձրաձայնել այդ փաստերի մասին: Քաղաքացիներից միայն Վանաձոր քաղաքի ավագանու անդամ Արմեն Այվազյանն է բարձրաձայնել փաստի մասին:

Հերթական անգամ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, խորամուխ չլինելով խուզարկությունների վերաբերյալ միջորդությունների հիմնավորվածությանը, հաստատելով դրանք, նպաստում է ոստիկանության կողմից քրեական գործով առնչություն չունեցող քաղաքացիների բնակարանները խուզարկելուն:

Հերթական անգամ ոստիկանությունը կիրառում է «խուզարկություն օպերացիան» իր տեսակետից «անբարեհույս» քաղաքացիներին հետապնդելու,

վախեցնելու, ահաբեկելու նպատակով: Ե'վ դատարանի, և' ոստիկանության կողմից նման գործելաոճը չեն կարող նպաստել իրենց նկատմամբ քաղաքացիների վստահության բարձրացմանը: Ավելին՝ հանգեցնում են իրավական համակարգի արժեզրկմանը:

Չեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցումներ է կատարվել ՀՀ Լոռու մարզի քննչական բաժին և ՀՀ դատական դեպարտամենտ ստանալու վերը նշված ժամանակահատվածում քանի խուզարկություն իրականացնելու քանի միջնորդություն է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան և քանի Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քանի որոշում է կայացվել: Ստացված թվերի միջև անհամապատասխանություն կա՝ ՀՀ դատական դեպարտամենտի տրամադրած տվյալների համաձայն 28 խուզարկության որոշում է կայացվել դատարանի կողմից, իսկ Լոռքւ մարզի քննչական բաժնի տվյալների համաձայն 9, ինչն էլ վկայում է այն մասին, որ խուզարկությունների մեծ մասը կատարվել է անօրինական, չնայած այն հանգամանքին, որ խուզարկությունների վերաբերյալ կայացվել են որոշումներ, այնուամենայնիվ՝ քննչական բաժնիը թվերը թաքցնելով ևս մեկ անգամ ապացուցում է որ համատարած խուզարկությունները օգտագործվում են որպես ճնշման գործիք, ընդ որում դրանք կատարվում են քրեական դատավարության օրենսգրքի իմաստով դատավարական կարգավիճակ չունեցող անձանց բնակարաններում:

Գործ 4, 2013թ,

Իրավունքի խախտման նկարագրությունը

Իր իրավունքների պաշտպանության համար կազմակեպություն է դիմել Արսեն Վազգենի Կիրակոսյանը: Արսեն Կիրակոսյանի ներկայացմամբ խնդիրը կայանում է հետևյալում՝ սույն թվականի մարտի 9-ի ոստիկանության աշխատակիցները խուզարկություն են կատարել նրանց բնակարանում, որի արդյունքում առգրավել են 2 հատ ոսկյա մատանի և 21 հատ հուշանվերներ, ինչպես նաև վերցրել են Արսեն Վազգենի Կիրակոսյանի անձնագիրը, որը մինչև օրս գտնվում է ոստիկանությունում:

Չեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է կատարվել ՀՀ ոստիկանության քննչական գլխավորև վարչության Լոռու մարզի քննչական բաժին ստանալու ինչ իրավական հիմքով է վերցվել Արսեն Վազգենի Կիրակոսյանի անձնագիրը և նրա ընտանիքին պատկանող վերը նշված գույքը, որ իրավական ակտով է կարգավորվում գործով վկայից անձնագիր և նրա ընտանիքից գույք վերցնելը, երբ է վերադարձվելու Ա. Կիրակոսյանի անձնագիրը և վերը նշված գույքը:

Իրավունքի խախտման նկարագրությունը

Գործ 5 2013թ,

2013 թ. փետրվարի 13-ի առավոտյան 7:30-ին ոստիկանության աշխատակիցները միաժամանակ խուզարկություն են իրականացրել 5

բնակարաններում՝ Նարեկ Սողոմոնյանի, նրա հոր, Արմենի, Սամվելի և Գարիկի: Խուզարկությունից հետո 4 հոգու բերման են ենթարկել. Նարեկի Սողոմոնյանին, Սամվելին, Արմենին և Գարիկին: Նույն օրը ժամը 11:30-ին Սամվելի բնակարանից բերման են ենթարկել նաև Սամվելի 2 ընկերներին, որոնց ոստիկանության Շենգավիթի բաժանմունքում պահել են 13 ժամ, իսկ մյուսներին 2 օր: Սամվելի բնակարանում ոստիկանության 3 աշխատակիցներ մնացել են առավոտվա ժամը 7:30-ից մինչև գիշերը ժամը 1-ը, /սակայն արձանագրության մեջ գրված է եղել 20:00/ Այդ ընթացքում Սամվելին մեկ անգամ բերել են տուն նորից խուզարկության, հետո նորից տարել են ոստիկնություն:

Երկրորդ անգամ Սամվելի բնակարանում խուզարկություն կատարելու ժամանակ ոստիկանության աշխատակիցները իրենց հետ տարել են նաև խուզարկության թույլտվության թղթերը: Միայն Նարեկին են ձերբակալել, իսկ մյուսները ազատության մեջ են:

Ոստիկանության բաժին բերման են ենթարկել նաև Նարեկի հղի կնոջը և պահել մոտ 1 ժամ:

Տղաներին ոստիկանության բաժին բերման ենթարկելու ժամանակ ոստիկանությունում է եղել նաև Երևան քաղաքի ոստիկանության պետ Ներսիկ Նազարյանը:

Նարեկը մեղադրվում է սպանության և գողության մեջ /փոխանակման կետի աշխատակիցը վիրավորվել է, կոմայից դուրս գալուց հետո նկարագրել է իր վրա կրակողին, որը շատ նման է եղել Նարեկին/ այնուհետև մահացել է: Մինչև մահանալը աշխատակիցը նշել է նաև որ փոխանակման կետի տեսախցիկները տուն գնալու ժամանակ անջատել է:

Գործ 6, 2013թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2013թ. մարտի 29-ին իր իրավունքների պաշտպանության համար «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ է դիմել Վանաձոր քաղաքի բնակիչ Կարեն Ռոստոմի Քարհանյանը:

Կ. Քարհանյանի բարձրացրած խնդիրը վերաբերվում է ՀՀ Ոստիկանության Բազումի աշխատակիցների կողմից պարբերաբար անհիմն կատարվում են նրա բնակարանի խուզարկություններ, չպահպանելով քրեական դատավարության նորմերը խուզարկություններ կատարելու վերաբերյալ:

Մասնավորապես Կ. Քարհանյանը նշում է, որ մեկ տարվա ընթացքում նրա բնակարանը խուզարկվել է 3 անգամ և ոչ մի անգամ նրա բնակարանից չի հայտնաբերվել այն իրերը կամ առարկաները, որոնց համար կատարվել է խուզարկությունները և ավելացնում է, որ կատարված խուզարկությունների վերաբերյալ չեն հատկացվել խուզարկություն կատարելու վերաբերյալ արձանագրությունները, ինչպես նաև կատարվել էն խուզարկություններ այն բնակարանում և ավտոտնակներում, որոնք նրա կողմից չեն օգտագործվում և նրան չեն պատկանում:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել Բազումի ոստիկանություն իմանալու Կարեն Ռոստոմի Քարհանյանի բնակարանում և հարակից տարածքներում Բազումի ոստիկանության կողմից վերջին մեկ տարվա ընթացքում քանի անգամ է կատարվել խուզարկություններ, Խուզարկությունների արդյունքում առգրավել են արդյո՞ք այն իրերը կամ առարկաները, որի համար կատարվել է խուզարկությունները, Խուզարկության արդյունքում տրամադրվել է արդյո՞ք խուզարկություն կատարելու մասին արձանագրությունները /խնդրում եմ կցել տրամադրելը հավաստող ապացույց/, միևնույն ժամանակ խնդրում եմ տրամադրել Կարեն Քարհանյանի բնակարաններում և հարակից տարածքներում խուզարկություններ կատարելու վերաբերյալ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների պատճենները և խուզարկություններ կատարելու մասին արձանագրությունների պատճենները:

Համապատասխան ներպետական օրենսդրություն

ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն՝Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 46-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝

«Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ 1. Քննիչը, բավարար հիմքեր ունենալով ենթադրելու, որ որևէ շենքում կամ այլ տեղ կամ որևէ անձի մոտ գտնվում են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար, խուզարկություն է կատարում դրանք գտնելու և վերցնելու համար:

2. Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար:

3. Բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ:

Չնայած այն հանգամանքին, որ հաճախ ոստիկանության աշխատակիցները բնակարանի խուզարկություն կատարում են դատարանի որոշման հիման վրա, այնուամենայնիվ այն դեպքերում երբ ոստիկանությունն իրականացնում է համատարած խուզարկություններ, կամ տարվա մեջ մի քանի անգամ անհիմն, դատավարական կարգավիճակ չունեցող անձանց բնակարաններում խուզարկություն կարող ենք փաստել, որ բոլոր դեպքերում խուզարկությունները իրականացվում են անօրինական կարգով:

Անօրինական ազատազրկում

Գործ 1., 2011թ.

Խախտման նկարագրությունը

Ալավերդի քաղաքի բնակիչ Սիլվա Ռամազյանը հայտնել է, որ 2011 թ. սեպտեմբերի 6-ին՝ առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում, Թումանյանի ոստիկանության 3 աշխատակիցներ ոստիկանության բաժին են տարել իր որդուն՝ Արման Ռամազյանին՝ պատճառաբանելով, թե կալանքից ազատվելուց հետո չի ներկայացել ոստիկանության բաժանմունք:

2011 թ. սեպտեմբերի 7-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում անօրինական կարգով ոստիկանության բաժին են տարել նաև Ս. Ռամազյանին, որտեղ նրան հայհոյել են, վատ վերաբերվելով հարցեր են տվել նրա որդու մասին՝ ոստիկանությունում պահելով մինչև ժամը 24:00-ն: 24:00-ին նա փախել է ոստիկանությունից, սակայն ճանապարհին ոստիկանները հայհոյելով, քաշքշելով նստեցրել են մեքենան և նորից տեղափոխել ոստիկանություն: Ս.Ռամազյանին գիշերը մեծ դժվարությամբ ոստիկանությունից գնացել է տուն: 2011 թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները կրկին Ս.Ռամազյանի տարել են ոստիկանություն հարցաքննության, երկարատև հարցաքննությունից հետո նա տուն է վերադարձել միայն երեկոյան ժամը 23:00-ին:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Գլխավոր դատախազություն:

Կազմակերպության հաղորդումն ուղարկվել է Լոռու մարզի քննչական բաժին համապատասխան ընթացք տալու և միացնելու Ս. Ռամազյանի որդու դեմ հարուցված քրեական գործին:

Լոռու մարզի քննչական բաժնից կազմակերպությանը գրությամբ տեղեկացրել են, որ կազմակերպության կողմից ներկայացված փաստերը հերքվել են Ս. Ռամազյանի կողմից: Որից հետո 2011 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ ոստիկանության

քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Թումանյանի քննչական բաժնից ստացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, համաձայն որի՝ կազմակերպության հաղորդման մեջ նշված դեպքը չի հիմնավորվել, իսկ Ա. Սաքունցը հանցագործության մասին հաղորդումը ներկայացրել է Ս. Ռամազյանի հայտնած տեղեկությունների հիման վրա: Հանցակազմի բացակայության, ինչպես նաև Ա. Սաքունցի և Ս. Ռամազյանի արարքներում հանցակազմ չլինելու հիմքերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գործ 2., 2011թ.

Խախտման նկարագրությունը

2011 թ. հոկտեմբերի 6-ին Վանաձոր քաղաքում կատարված դանակահարության համար նույն օրը՝ ժամը 21:30-ի սահմաններում, որպես վկա Վանաձորի ոստիկանության բաժին է տարվել Արտյոմ Առաքելյանին, որտեղ մնացել է մինչև գիշերը ժամը 01:00-ն, այնուհետև նրան ոստիկանությունից ազատ են արձակել միայն անձնագիրը ներկայացնելուց հետո՝ պահանջելով հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10:00-ին, ներկայանալ ոստիկանություն: Հաջորդ օրը նա ներկայացել է ոստիկանություն և այնտեղ պահվել մինչև գիշերվա ժամը 01:00-ն: մոտ 15 ժամ մնալով ոստիկանությունում, ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական ճնշումների ցուցմունքներ ստանալու նպատակով: Ոստիկանության աշխատակիցների կողմից չի բացատրվել դատավարական կարգավիճակին համապատասխան իրավունքները և պարտականությունները: Ոստիկանությունից նրան թողել են միայն այն ժամանակ, երբ ծնողը հայտարարել է, որ գնում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ: Ա. Առաքելյանի ստացած մարմնական վնասվածքներն արձանագրվել են բժշկական հետազոտության արդյունքում:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն:

Կազմակերպություն դիմած քաղաքացիները ոստիկանության աշխատակիցների կողմից գործադրված ճնշումների արդյունքում հրաժարվել են իրենց՝ կազմակերպությանը տված դիմումներից:

Հետագայում ցուցմունքներ է տվել այն մասին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարին տվել է սուտ տեղեկություններ, վախենալով, որ որդուն հնարավոր է մեղադրեն հանցագործություն կատարելու մեջ:

ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում նյութեր քրեական հետապնդում է իրականացվել նախագահի դեմ, հետագայում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Գործ 3., 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում հասարակական դիտորդների խմբի անդամներ՝ Ավետիք Իշխանյանը, Արթուր Սաքունցը և Արման Դանիելյանը այցելել են «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ընթացքում պարզվել է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 2010 թվականի օգոստոսի 5–ից մինչև սեպտեմբերի 1–ը առանց օրենքով նախատեսված հիմքերի պահվել է ՀՀ քաղաքացի Սարգիս Պողոսյանը: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ փաստաթղթերը. Ազատազրկվածի քարտում նշված է եղել. «Մուտք է եղել հիմնարկ 05.08.2010թ. և ազատվել է 01.09.2010թ. ՀՀ գլխավոր դատախազության թիվ 21/32-570-10 թվականի գրության համաձայն:

Ձեռնարկված միջոցառումները

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշպան ՀԿ-ի և «Քաղաքացիական Հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի նախագահների կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն (անձին ակնհայտ ապօրինի կալանավորելու և ակնհայտ ապօրինի կալանքի տակ պահելու) մասին:

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը բողոքարկվել է վերադասության այնուհետև դատական կարգով: Ընդհանուր իրավասության դատարանը մերժել է ներկայացված դիմումը:

Ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է ներկայացված բողոքը, բեկանել է ընդհանուր իրավասության դատարանի որոշումը և վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցրել՝ <u>վերացնելու անձի իրավունքների ու ազատությունների խախտումները</u>:

Դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ, սակայն համապատասխան մարմինների կողմից չի կատարվել: Կազմակերպության կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում դատարանի որոշումը չկատարելու հիմքով: Հաղորդման վերաբերյալ որոշում չի կայացվել կազմակերպության կողմից դիմում է ներկայացվել դատարան ՀՀ գլխավոր դատախազությանը պարտավորեցնել կատարելու վերաքննիչ դատարանի որոշումը: Դատարանի կողմից կայացվել է կազմակերպության դիմումը մերժելու մասին որոշում, որը բողոքարկվել է վերաքննիչ քրեական դատարան, որի կողմից ևս մերժվել է:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է, կայացրել, որ տեղի է ունեցել անձի իրավունքների և ազատությունների խախտում և պարտավորեցրել է վերացնելու անձի իրավունքների ու ազատությունների խախտումները այնուամենայնիվ պետության կողմից քայլեր չեն ձեռնարկվել դատարանի որոշումը կատարելու ուղղությամբ:

Գործ 4., 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. մարտի 10-ին կազմակերպություն է դիմել Սպիտակ քաղաքի բնակիչ Ռոբերտ Հովհաննիսյանը, ով կազմակերպությանն ուղղված դիմումում նշել է, որ սույն թվականի մարտի 7-ին գիշերը 11:30-ի սահմաններում իր բնակարան են ներխուժել 4-5 ոստիկաններ, որոնցից մեկը եղել է քաղաքացիական համազգեստով: Մտնելով տուն՝ ոստիկանության աշխատակիցները հրահանգել են Ռ. Հ.-ին, որ վերցնի 3 տարեկան երեխային և մորը, որպեսզի գնան ոստիկանություն: Այն հարցին թե ինչի համար են գնում պատասխանել են, որ «երեխայի առևանգման»: Ոստիկանները նրանց բերման են ենթարկել ոստիկանության Սպիտակի բաժին, որտեղից էլ տարել են Ոստիկանության Մաշտոցի բաժին, ուր հասել են գիշերը ժամը 2:30-ի սահմաններում: Ոստիկանությունում նրանց սպառնացել են, որ իբր կձերբակալեն երեխային առևանգելու համար: Քննիչը նրանց հետ խոսել է կոպիտ, գռեհիկ տոնով: Ոստիկանության Մաշտոի բաժնում մնացել են մի քանի ժամ: Ոստիկանութոյունից նրանց թույլատրել են գնալ միայն 3 տարեկան երեխային մորը հանձնելուց հետո:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն:

2012 թ. ապրիլի 16-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, այն հիմանվորմամբ, որ կազմակերպություն դիմած քաղաքացին իր բացատրությունում նշել է, որ ոստիկանության աշխատակիցներն իրենց նկատմամբ վատ վերաբերմունք չեն դրսևորել: Իհարկե չի բացառվում այն հանգամանքը, որ ցուցմունքները տրվել են ոստիկանության աշխատակիցների ճնշումների արդյունքում:

Ոստիկանության Սպիտակի և Մաշտոցի բաժնի աշխատակիցների կողմից թույլ են տրվել Ռ. Հովհաննիսյանի ՀՀ Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների խախտումներ, ինչը փաստվում է նաև Ռ. Հ.-ի բացատրությամբ ներկայացված տեսակետով, քանզի վերջինս կարող էր այդիսի դիրքորոշում հայտնել՝ ելնելով ոստիականության աշխատակիցների կողմից իր իրավունքների և ազատությունների իրական կամ ենթադրյալ խախտումները կամ դրանց խախտման սպառնալիքը կանխելու համար:

Գործ 5, 2013թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

2013թ. մարտի 28-ին Կարեն Սաշիկի Էվինյանի իրավունքների պաշտպանության համար մեր կազմակերպություն է դիմել Վանաձոր քաղաքի Ադամյան փ. 3 տան բնակիչ Սմբատ Արշալույսի Հակոբյանը: Ըստ Ս. Հակոբյանի մի

քանի օր առաջ է Կ. Էվինյանը վերադարձել Հայաստան և հենց օդանավակայանում ձերբակալվել է և տեղափոխվել Վանաձորի ոստիկանություն և այնտեղ պահվել է 3 օր, որից հետո տեղափոխվել է մեկուսարան:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ Լոռու մարզի քննչական բաժին պարզելու Կարեն Էվինյանին ինչ մեղադրանք է առաջադրվել և որքան ժամանկետով է ընտրվել խափանման միջոցը:

Համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:....:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվաշի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք:
Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:....:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված են բոլոր այն դեպքերում երբ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել, ցանկացած դեպքում երբ անձին արգելանքի են վերցնում կամ բերման են ենթարկում առանց համապատասխան պատճառաբանված որոշման և դատավարական կարգավիճակի խախտվում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը: Այս իրավունքի խախտումը հիմնականում զուգորդվում է խոշտանգումներից և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը:

Բերման ենթարկելու վերաբերյալ
Գործ 1., 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած Նարեկ Ափինյանը հայտնել է, որ սույն թվականի օգոստոսի 17-ին երեկոյան ժամը 23:30-ից 00:00-ի սահմաններում բերման են ենթարկվել Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժին: Ոստիակնության բաժնում Նարեկ Ափինյանը ենթարկվել է հոգեբանական ճնշումների, արժանապատվությունը նվաստացնելու նպատակով նրան մի քանի անգամ հարվածել են պարանոցի հատվածում:
Ճնշումներ են գործադրվել նաև հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո, դրանից հրաժարվելու ուղղությամբ:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն: ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի մոտ հոգեբանական և ֆիզիկական ճնշումների ազդեցությամբ գրված բացատրություն տալուց հետո Ն. Ա.-ը, հասկանալով կատարվածը, դիմում է ուղարկել Հատուկ քննչական ծառայություն, որով խնդրել է չեղյալ համարել բացատրությունը և ընթացք տալ հանցագործության մասին հաղորդմանը, քանի որ ինքը ցուցմունքները գրել է հոգեբանական և ֆիզիկական ճնշումների ազդեցության տակ:
Հաղորդման հիման վրա կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որոշման հիմքում դրվել է Ն. Ա.-ի ճնշումների ներքո տրված բացատրությունը և անդրադարձ չի կատարվել Ն. Ա.-ի կողմից ներկայացված դիմումին, որով նա խնդրել է հիմք չընդունել բացատրությունը: ՀՀ ՀՔԾ ՀԿԳ քննիչի կողմից կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Որոշումը բողոքարկվել է վերադասության, այնուհետև դատական կարգով: Ընդհանուր իրավասության դատարանը մերժել է կազմակերպության կողմից ներկայացված դիմում: Որեշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

Հաղորդումը ներկայացնելուց հետո Ն. Ա.-ին է մոտեցել ոստիկանության աշխատակից Արամ Ղազարյանը և նրանից ներողություն է խնդրել 2012 թ. օգոստոսի 17-ին ոստիկանության Վանաձորի բաժնում նրա նկատմամբ խմբակային խոշտանգումներ ու հոգեբանական ճնշումներ գործադրելու կապակցությամբ, հայտնելով, որ զղջում է իրենց կատարած գործողությունների համար և խնդրել է, որ հետ վերցնի իր կողմից ներկայացված բողոքը: Նույն օրը՝ 2012թ. օգոստոսի 22-ին, երեկոյան ժամը 20:00-ի սահմաններում Ն.Ա.-ին զանգահարել է Հատուկ քննչական ծառայության քննիչ Գ. Հովակիմյանը և կանչել է Լոռու մարզի դատախազություն:
Քննիչի կանչով դատախազություն ներկայանալուց հետո, քննիչի թելադրմամբ Ն. Ա.-ը գրել է բացարտրություն, այն մասին, որ ինքը բողոք չունի, և ոստիկանությունում իր նկատմամբ հոգեբանական և ֆիզիկական բռնություններ չեն իրականացվել:

Այսպիսով, ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի քրեական հետախուզության բաժնի աշխատակիցների կողմից ոտնահարվել են Ն.Ա.-ի՝ սահմանադրորեն և օրենսդրությամբ ամրագրված մի շարք հիմնարար իրավունքներ և ազատությունները:

Գործ 2., 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թվականի օգոստոսի 10-ին կազմակերպություն են դիմել ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղ գյուղի բնակիչները: Վերջիններս հայտնել են այն մասին, որ ոստիկանության Սպիտակի, Դիլիջանի և Իջևանի աշխատակիցներն իրենց գյուղի բնակիչներից շատերին անհարկի անհանգստացնում են, մի քանի անգամ բերման են ենթարկել ոստիկանության Սպիտակի, Դիլիջանի և Իջևանի բաժիններ հարցաքննության՝ չներկայացնելով ոստիկանություն բերման ենթարկելու մասին

համապատասան որոշում կամ ծանուցագիր: Եղել են դեպքեր, երբ ոստիկանություն են տարել երեկոյան ուշ ժամի և նրանք ոստիկանությունում մնացել են մինչև գիշերվա ժամը 02-ը: Ոստիկանության աշխատակիցները գյուղացիների հետ խոսել են բարձր տոնով, գոռացել են, ինչպես նաև վիրավորել ու սպառնացել:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից Հարթագյուղի բնակիչների իրավունքների պաշտպանության համար հանցագործության մասին հաղորդում է ուղարկվ ՀՀ գլխավոր դատախազություն:

Կազմակերպության հաղորդման վերաբերյալ դեռևս պատասխան չի ստացվել: Կազմակերպության կողմից գրություն է պատրաստվել ստանալու կազմակերպության հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ որոշում:

Գործ 3, 2012թ.

Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թ. հունիսի 4-ին կազմակերպություն է դիմել Անուշ Քոչարյանը, որը կազմակերպությանն ուղղված դիմումում նշել է, որ մոտ 25 օր առաջ ոստիկանության 3 աշխատակիցներ են գնացել իր տուն և խափելով տարել ոստիկանություն՝ բերման են ենթարկել ասելով, որ «իբև ինքը մի կնոջ գումար է պարտք և 5 րոպեով գնանք ոստիկանություն քեզ ճանաչի ու տուն կբերենք»: Լոռու մարզի քննչական բաժնո Ա. Քոչարյանի վրա գոռալով հարցեր են տվել իր բնակարանը վարձով տալու վերաբերյալ: Լոռու մարզի քննչական բաժնում գործով քննիչը ստորագրել տվել է փաստաթուղթ, որի բովանդակությանը չի հասցրել ծանոթանալ, առանց ծանոթանալու ստորագրել է: Ըստ Ա. Քոչարյանի իրենն քննչական բաժին են տարել 2 անգամ, վերձրել են նրա անձնագիրը և արդեն մոտ 20 օր է չեն վերադարձրել:

Հետագայում ստացել է իրեն որպես մեղադրյալ ներգրավվելու մասին որոշում, որով մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր. 262-րդ հոդվածի 2 մասի 5-րդ կետով:

Ձեռնարկված միջոցառումները

2012 թ. հուլիսի 24-ին դատարանը վճռով Անուշ Կոլյայի Քոչարյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 262 հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով և դատապարտել ազատազրկման 3/երեք/ տարի ժամկետով: Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդված՝ պատիժը պայմանականորեն չի կիրառել, սահմանելով փորձաշրջան 2/երկու/ տարի ժամանակով՝ վարքի վերահսկողությունը դնելով այլընտրանքային պատիժների կատարման բաժնի բնակության վայրի ստորաբաժանման վրա:

Գործ 4, 2013թ.

Ձեռնարկված միջոցառումները

2012թ. նոյեմբերի 18-ին Լոռու մարզի Շահումյան գյուղի «Մուշ» ռեստորանային համալիրում փաստաբան Սամվել Շարբաթյանի մահվան դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում որդիներս՝ Արեն և Արտակ Վերանյանները, ներգրավված են որպես կասկածյալ: 2012 թվականի նոյեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը, ժամը 24:00-ի սահմաններում ոստիկանության երեք աշխատակիցներ եկան մեր տուն, նրանք ներկայացան (նրանցից մեկը ներկայացավ որպես ՀՀ ոստիկանության Գուգարքի քրեականի պետ Արտյուշա Հարությունյան) և հարցրեցին, թե որտեղ են տղաներս: Երբ հայտնեցին, որ նրանք դեռ տուն չեն եկել, ոստիկանության աշխատակիցները նայեցին սենյակները, որպեսզի համոզվեն, որ մեր տղաները տանը չեն: Արձանագրություն կազմելու ընթացքում ոստիկաններին զանգահարեցին, որոնք էլ հայտնեցին որ Արեն և Արտակ Վերանյանները տանը չեն, որից հետո ոստիկանության աշխատակիցները մեզ հայտնեցին, որ ես և կինս պետք է գնանք ոստիկանության Գուգարքի բաժին: Ի պատասխան մեր հարցերին, թե ինչ պատճառով և ինչ հիմքով են մեզ բերման ենթարկում ոստիկանություն, նրանք հայտնեցին, որ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա. Համբարյանի և Լոռու մարզի դատախազ Կ. Շահբազյանի հրամանով պետք է ինձ և կնոջս՝ Թամարա Խուջոյանին, բերման ենթարկեն Գուգարքի բաժին, սակայն ինձ բերման ենթարկելու մասին որևէ որոշում ցույց չեն տվել: Ես խնդրեցի ոստիկանության աշխատակիցներին, որ միայն ինձ բերման ենթարկեն, քանի որ կինս վատառողջ էր, ջերմություն ուներ, թոռնիկներս նույնպես վատառողջ էին, սակայն նրանք մերժեցին: Ինձ և կնոջս ոստիկանության աշխատակիցները տարան ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժին, որտեղ պետի աշխատասենյակում մեզ սպասում էին ՀՀ Լոռու մարզի դատախազ Կ. Շահբազյանը և ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Ա. Համբարյանը: Ոստիկանության բաժնում մեզ պահեցին մոտ 5 ժամ:

Չեռնարկված միջոցառումները

Քաղաքացու անունից հանցագործության մասինհաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն և ՀՀ գլխավոր դատախազություն:

Համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն «<u>**Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին**</u> հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

2. Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող **հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա:** Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին

կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին»:

Այն բոլոր դեպքերում երբ ոստիկանության աշխատակիցները անձանց բերման են ենթարկում առանց որևէ կարգավիճակի, առանց համապատասխան պատճառանաբված որոշման թույլ են տալիս անձի իրավունքների և ազատությունների խախտում: Բերման ենթարկելը հետ հիմնականում խախտվում է նաև անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև ցուցմունքներ ստանալու նպատակով նրանց նկամամբ հաճախ գործադրվում է հոգեբանական կամ ֆիզիկական բռնություն:

Անօրինական հետապնդումներ

Գործ 1., 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած Ա. Առաքելյանի իրավունքների պաշտպանության իրականացնելու համար կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ուղարկվել, որից հետո քաղաքացին հրաժարվել է իրավական աջակցություն ստանալուց և ոստիկանությունում ցուցմունքներ տվել, այն մասին, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարին տվել է սուտ տեղեկություններ, վախենալով, որ որդուն հնարավոր է մեղադրեն հանցագործություն կատարելու մեջ և հրաժարվել է դիմումից: ՀՀ Ոստիկանության կողմից կազմակերպության նախագահի նկատմամբ իրականացվել է քրեական հետապնդում, Լոռու մարզի քննչական բաժնում նախապատրաստվել են նյութեր սուտ մատնության վերաբերյալ: Նյութերի նախապատրաստման ընթացքում հարցաքննվել է նաև կազմակերպության նախագահը: Արդյունքում կազմվել է քրեական գործի հարոցումը մերժելու մասին որոշում, հանցակազմի բացակայության հիմքով:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է նորկայացվել՝ անօրինական հետապնդում իրականացնելու համար:

ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնում նյութեր քրեական հետապնդում է իրականացվել նախագահի դեմ, հետագայում կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Գործ 2., 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

Կազմակերպություն դիմած Անդրանիկ Ղանդիլյանը հայտնել է այն մասի, որ իրեն մոտ 1 ամիս անօրինական կարգով հետապնդել են ոստիկանության Գուգարքի բաժնի աշխատակիցները:

Մոտ մեկ ամիս առաջ Լոռու մարզի Դարպաս գյուղի գետի մոտակայքում Անդրանիկ Ղանդիլյանը չորացած փայտ և երկաթ հավաքելիս է եղել, երբ իրեն են մոտեցել ոստիկանության երկու աշխատակից և հայտարարել են. «էս ծառ ես կտրում»: Իսկ Ա. Ղանադյանը ասել է, որ ինքը ծառ չի կտրել, այլ փայտերի և երկաթի թափոններ է հավաքում:

Ոստիկանության աշխատակիցները Ա. Ղանդիլյանին ասել են, որ «հաջորդ օրը առավոտյան ժամը 7-ին կամ 7:30-ին տանը կլինես, մենք կգանք քեզ կտանենք ոստիկանություն, 2 թուղթ կա ստորագրելու, կստորագրես, որ տասը հատ ծառ ես կտրել ու կթողնենք կգնաս, դրանից հետո քեզ գյուղում ոչ ոք չի անհանգստացնի, մեզ պադերժկա կանես»:

Հաջորդ օրը ոստիկանության աշխատակիցները գնացել են Ա. Ղանդիլյանի հետևից, սակայն տատիկը, տեսնելով ոստիկաններիո, թաքցրել է թոռանը և խաբել ոստիկանության աշխատակիցներին, թե իբր թոռը թաղում է գնացել: Ոստիկանության նմանօրինակ հետապնդումները շարունակվել են մի քանի օր, որը զուգորդվել է վիրավորական և սպառնալից արտահայտություններով:

Ձեռնարկված միջոցառումները

Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Լոռու մարզի դատախազություն և գլխավոր դատախազություն:

Հաղորդման հիման վրա իրականացվում է ծառայողական քննություն: Կազմակերպության իրավաբանի ներկայությամբ հարցաքննվել է Ա. Ղանդիլյանը: Հաղորդման վերաբերյալ ստացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որը չի բողոքարկվել հիմքերի բացակայության պատճառով:

Գործ 3, 2012թ.
Իրավունքի խախտման նկարագրությունը

2012 թվականի նոյեմբերի 16-ին իր իրավունքների պաշտպանության խնդրով մեր կազմակերպություն է դիմել Աննա Աղվանի Արզումանյանը: Վերջինս հայտնել է այն մասին, որ 2012 թվականի նոյեմբերի 15-ին ժամը 20:00-ի սահմաններում իր բնակարանի դուռն ուժգին բախել են: Ա. Արզումանյանի հարցին, թե ովքեր են, պատասխանել են, որ ոստիկանությունից են և Արթուրին են ուզում: Ա. Արզումանյանը հայտնել է, որ իր որդին արդեն 4 տարի է գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում և խնդրել է հեռանալ: Սակայն ոստիկանության աշխատակիցները (Գոռ Խառատյանը, Բարսեղյանը) պնդել են, որ դուռը բացեն, «միաժամանակ վիրավորական խոսքեր շպրտելով՝ էս կնիկը հիվանդ ա, լավ չի, չի հասկանում, որ դուռը պտի բացի, կարող ա ես եղունգիս նայել եմ, որ քո տղան տանը չի, դուռը բացի, մարդավարի խոսենք»: Երբ Ա. Արզումանյաը հարցրել է, թե ով է ուղարկել նրանց, ոստիկանության աշխատակիցներից մեկն ասել է, որ «ես ինքս եմ եկել, քրեական

հետախուզությունից եմ: Քո տղան հանցանք է գործել. պետք է տանենք բաժին»: Ա. Արզումանյանն ասել է, որ շուտով իր տղան պետք է վերադառնա Հայաստանի Հանրապետություն, սակայն տղաներից մեկն ասել է, որ «հենց գա պտի տանենք փակենք, լավ կանի վաբշե չգա»:

Ա. Արզումանյանը հայտնել է նաև այն մասին, որ դա առաջին դեպքը չէ, երբ իր տղայի բացակայության ընթացքում հայտնվում են ոստիկանության աշխատակիցներ և անհիմն ու անհեթեթ մեղադրանքներով պահանջում, որ իրենց հանձնի տղային: Նույն խնդրով ոստիկանության աշխատակիցներն անհանգստացրել են նաև հարևաններին: Ա. Արզումանյանի հարցերին, թե ինչ եք ուզում, ոստիկանության աշխատակիցները յուրաքանչյուր անգամ պատասխանել են տարբեր կերպ, մասնավորապես՝ «մեքենա են փախցրել, ուզում ենք իմանալ՝ Արթուրը տեղյակ է, թե ոչ», «քաղաքում հանցագործություն է տեղի ունեցել, քո տղան մասնակցել է, թե ոչ»:

Չեռնարկված միջոցառումները

Ա. Արզումանյանի իրավունքների պաշտպանության համար կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Հատուկ քննչական ծառայության քննիչի կողմից կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին **որոշում**, որը կազամկերպության կողմից չի բողոքարկվել հիմքերի բացակայության պատճառով:

Համապատասխան ներպետական օրենսդրությունը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը հանցագործության մեջ կասկածվող անձին կարող են ձերբակալել, հարցաքննել, նրա նկատմամբ կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, ինչպես նաև որպես մեղադրյալ ներգրավել և մեղադրանք առաջադրել՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

2. Դատախազը պարտավոր է դատարանում պաշտպանել մեղադրանքը, քանի դեռ չեն հայտնաբերվել քրեական հետապնդումը կամ քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված են այն դեպքերը երբ անձի նկատմամբ կարող է իրականացվել հետապնդում, սակայն ոստիկանության աշխատակիցները շատ հաճախ հանցագործությունները բացահայտելու նպատակով, ենթադրությամբ, առանց համապատասխան հիմքերի անօրինական կարգով հետապնդում են իրականացնում <պատահական անձանց>, կամ <ոստիկանության տեսադաշտում հայտնված անձանց նկատմամբ> հույս ունենալով,

որ անօրինական գործողությունների միջոցով կարող են հասնել նրան, որ տվյալ անձը հանցագործության կատարման վերաբերյալ ստանալ ինքնախոստովանական ցուցմունքներ:

Վերը նշված տվյալները աղյուսակային տեսքով

Իրավունքը	2011թ.	2012թ.	2013թ.
Վատ վերաբերմունք	3	3	1
Ոստիկանության աշխատակիցների անօրինական գործողությունների	1	5	-
Անօրինական խուզարկություն	1	2	3
Անօրինական ազատազրկում	2	2	1
Բերման ենթարկելու վերաբերյալ	-	3	1
Անօրինական հետապնդումներ	-	3	-